ԱՐՁԱՆԳՐՈՒԹՅՈՒՆ 6

ք. Իջևան 27.01.2022թ.

Նախագահ՝ Գ. Ավետիսյան /դեկանի պաշտոնակատար/

Քարտուղար՝ Ա. Ալեքսանյան

Առցանց կազմակերպած նիստին մասնակցել են Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Ա. Սարիբեկյանը, Ա. Ուլիխանյանը, Հ. Մարգարյանը, Գ. Ալեքսանյանը, Գ. Մինասյանը, Ա. Եգանյանը, Պ. Ասլիբեկյանը, ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահ Ի. Վարդանյանը, ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ Ա. Եսայանը, Հ. Սանթրոսյան, Ա. Բարսեղյանը: Նիստը անց է կացվել zoom.us հարթակում, գիտական խորհրդի նախագահն է Գ. Ավետիսյան, քարտուղարը՝ Ա. Ալեքսանյանը:

Նիստի օրակարգը ներկայացրեց Գ. Ավետիսյանը:

Օրակարգ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա II կիսամյակի աշխատանքների ժամանակացույց -պլանի քննարկում և հաստատում:
2. Հաղորդում 2021-2022 ուստարվա II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:
3. Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների կիսամյակային հաշվետվություն /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
4. ԿԾ պատասխանատուների կիսամյակային հաշվետություն /Զեկ Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:
5. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Բաց քվեարկությամբ 16 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց. Որոշում 1/1 ¬

Հաստատել նիստի օրակարգը

1. Լսեցին.- Ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա II կիսամյակի աշխատանքների ժամանակացույց -պլանի քննարկման և հաստատման մասին/ Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսայանը ներկայացրեց ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցը: Նա նշեց, որ ֆակուլտետի գիտխորհրդի աշխատանքային պլանի կազմման նպատակը ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության կանոնակարգումն է: Այդ փաստաթուղթը շեշտադրում է այն խնդիրները, որոնք ընթացիկ ուսումնական տարում կլինեն ֆակուլտետի գիտխորհրդի գործունեության առանցքում: Այն թույլ կտա ավելի ուղղորդված և համակարգված իրագործել ֆակուլտետի ռազմավարական ծրագիրը: Ֆակուլտետի համար առաջնահերթ նշանակություն ունեցող այս փաստաթղթի մշակումը կհանգեցնի մյուս օղակների, մասնավորապես ամբիոնների, աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը: Այնուհետև զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի գիտխորհրդի 2021-2022 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցը:

Արտահայտվեցին - Մ. Միքայելյանը

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին – Հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի 2021-2022 ուստարվա II կիսամյակի աշխատանքների ժամանակացույց –պլանը:

2. Լսեցին.- Հաղորդում 2021-2022 ուստարվա II կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին/Զեկ. Գ. Ավետիսյան/:

Գ. Ավետիսյանը հաղորդեց, որ 2021-2022 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացները արդյունավետ կազմակերպելու նպատակով Ֆակուլտետում իրականացվել են մի շարք աշխատանքներ.

- Կազմվել են ֆակուլտետում գործող երկու մասնագիտությունների գծով 2021-22 ուստարվա II կիսամյակի դասատախտակները՝ ըստ տվյալ կիսամյակում դասավանդվող դասընթացների: Դրանք քննարկվել են մյուս ֆակուլտետների պատասխանատուների հետ՝ զուգադիպումներից խուսափելու նպատակով:
- Սահմանվել է ժամկետ /15.02.22/ դասընթացի փաթեթները վերանայելու և ներկայացնելու համար:
- Սահմանվել է ժամկետ /19, 02. 22/ հարցաշարերն ուսանողներին տրամադրելու համար:
- Ամբիոններում նախատեսվում են քննարկել հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացների հետազոտական թեմանները
- Ամբիոններում իրականացվել են քննարկումներ պրակտիկաների ծրագրերի և դրանց արդյունավետ իրականացման վերաբերյալ,
- Ամբիոնները ուշադրության կենտրոնում են պահում ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, ավարտական կուրսի ուսանողներին և ղեկավարներին է տրամադրվել ԵՊՀ ԻՄ բակալավրի ավարտական աշխատանքի պատրաստման և գնահատման վերանայված կարգը,
- Կազմվել են խորհրդատվության ժամանակացույցերը,
- Ֆակուլտետի գիտական խորհրդում նախատեսվում է քննարկել անվանական կրթաթոշակի հավակնորդների ցուցակը,

- Կազմվել է հեռակա ուսուցման 1-ից 5-րդ կուրսերի առաջին լուծարքային շրջանի ժամանակացույցը,
- Կատարվել է նախապատրաստական աշխատանքներ հեռակա ուսուցման 1-ից 5-րդ կուրսերի դասացուցակի կազմման համար:

Արտահայտվեցին.- Գ. Հովհաննիսյանը, Մ. Միքայելյանը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2021-2022 ուստարվա II կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին հաղորդումը ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.- Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնի վարիչների կիսամյակային հաշվետվություն /Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ ամբիոնի գործունեությունը պայմանականորեն բաժանում են մասերի.

- կազմակերպում, որի մեջ մտնում է առարկայական ծրագրերի առկայությունը, նրանց նորացման, հատկապես գրականության ցանկի վերանայում, բոլոր առարկանների հարցաշարերի տրամադրում, որի հիման վրա հարցատոմսերի կազմումը, հետազոտոկան բաղադրիչով դասընթացի կազմակերպումը կարգին համապատասխան: Բոլոր դասընթացների շրջանակներում լրացուցիչ աշխատանքերի հանձնարարում
- ամբիոնային քննարկումներ, որոնք վերաբերում են հարցման արդյունքներին:
- իրականացվել է հեռակա ուսուցման դասապրոցեսը և քննաշրջանը որոնք առավել արդյունավետ կազմակերպվեին:

- ամբիոնի դասախոսները սերտ համագործակցում են ուսանողների հետ՝ ավարտական աշխատանքների, հետազոտական բաղադրիչով առարկաների գծով։
- ամբիոնի դասախոսները մասնակցել են կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման SS համակարգի սպասարման և զարգացման տարբեր դասընթացների։

Մ. Միքայելյանը ներկայացրեց, որ առաջին կիսամյակի գործընթացները իրականացվել են նախօրոք կազմված պլանին համապատասխան։ Բոլոր դասախոսները աշխատել են հաստատված անհատական ծանրաբեռնվածության շրջանակներում, որոնք խախտում տեղի չի ունեցել։ Առաջին կիսամյակում ունեցել ենք չորս դասընթացից հետազոտական բաղադրիչով առարկա։ Այս կիսամյակ հետազոտական բաղադրիչով առարկաների կազմակերպումը առավել արդյունավետ էր։

Ամբիոնի երկու դասախոս գիտական հոդված են հրապարակել։ Ամբիոնում ձևավորված աշխատանքային խումբ իրականացնում է Ֆինանսներ ԿԾ մոնիթորինգ։ Ամբիոնում քննարկվել են ՄԿՈԱ բաժնի կողմից իրականացված տարբեր հարցումների արդյունքները։ Իրականացվել է դասալսումներ, որոնք հիմնականում գոհացուցիչ էին։

Մ. Միքայելյանը նշեց, որ ամբիոնի կողմից կազմակերպվել է հանդիպում արտաքին շահակից, գործընկեր Կենտրոնական Բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի աշխատակիցների հետ։

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.10 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- Մասնագիտական ամբիոնների գործունեության վերաբերյալ ամբիոնների վարիչների կիսամյակային հաշվետվությունները ընդունել ի գիտություն։

4. Լսեցին.- «Ֆինանսներ»/ ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների կիսամյակային հաշվետություն/ Զեկ Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Ա. Ուլիխանյանը ներկայացրեց 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում, «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավարի հաստատված աշխատանքային պլանի հիման վրա: Նա հաղորդեց, որ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Առաջին կուրսեցիներին ներկայացրել են

1. ԵՊՀ ԻՄ դասատախտակից, գրադարանից, կայք էջից օգտվելու կարգը
2. ԵՊՀ ԻՄ ներքին կարգապահական կանոնները
3. ԵՊՀ ԻՄ բակալավրի կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը
4. ԵՊՀ ԻՄ-ում գործող կանոնակարգերը և իրավական ակտերը, այդ թվում ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգը

- Ուսանողներին տրամադրել են համապատասխան խորհրդատվություն և օգնություն՝ ուսումնական գործընթացին առնչվող փոփոխությունների վերաբերյալ
- Նպաստել են ուսումնական, քննական գործընթացների, հետազոտական աշխատանքների իրականացման թափանցիկության ապահովմանը
- Ներկայացրել են «ԵՊՀ ԻՄ ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանց ընդգրկվելու համար գրանցման» կարգը
- Ներկայացրել և մեկնաբանել են կրթական ծրագիրը
- Ներկայացրել և մեկնաբանել են հետազոտական աշխատանքների պատրաստման կարգը
- Հետևել ենք քննական հարցաշարերը ուսանողներին ժամանակին տրվեն

Միևնույն ժամանակն կատարել են

1. առարկայական պորտֆոլիոնները կրթական ծրագրերի համապատասխանության ստուգում
2. Ընթացիկ քննությունների և ստուգումների հարցաշարերի և առարկայական պորտֆոլիոներին համապատասխանության ստուգում
3. Մատյանների գրանցումների ստուգում
4. Իրականացրել են քննաշրջանի վերահսկողություն

Ա. Սարիբեկյանը հաղորդեց, որ 2021-2022 ուսումնական տարվա ԿԾՊ աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքներից իրականացվել են հետևյալները.

- ուսանողներին համառոտ ներկայացվել է ԿԾ ղեկավարի տարվա աշխատանքային պլանը և պարտականությունները:
- համադրվել է տարբեր տարիների ԿԾ, քննարկվել փոփոխությունները
- Ավարտական կուրսում քննարկվել են ԿԾ-ի վերջնական արդյունքները և բավարարվածությունը դասընթացների կազմակերպման ձևից, դասավանդման մեթոդներից:
- վերանայվել և համալրվել են առկա ուսումնական փաթեթները:
- հանդիպում է կազմակերպվել Իջևանի թիվ 5 դպոցի բարձր դասարանի աշակերտների հետ: Ներկայացվել են կրթական ծրագրի վերջնարդյունքները և դրանք ապահովելու համար իրականացվող գործընթացները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- «Ֆինանսներ»/ ըստ ոլորտի/ և «Զբոսաշրջություն» ԿԾ պատասխանատուների կիսամյակային հաշվետություններն ընդունել ի գիտություն:

5. Լսեցին.- 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվության մասին/ Զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Սարիբեկյան, Ա. Ուլիխանյան/:

Գ. Հովհաննիսյանը հաղորդեց, որ այս կիսամյակ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում հետազոտական բաղադրիչով դասընթացները երկուսն են, որոնք իրականացվում են Զբոսաշրջություն ԿԾ երրորդ կուրսում: Նախորդ տարվա փորձից ելնելով, կարելի է արձանագրել, որ այս տարի հետազոտական աշխատանքների հարցում փոքր-ինչ ուսանողները հմտացել են: Աշխատանքները վերահսկվել են ամբիոնի կողմից և արդյունքները քննարկվել են ամբիոնում:

Մ. Միքայելյանը նշեց, որ այս կիսամյակ Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի չորս դասընթացներում ներառված են հետազոտական բաղադրիչ՝ 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 3-րդ և 2 դասընթաց Ֆինանսներ ԿԾ 4-րդ կուրսերում: Մ. Միքայելյանը նշեց, որ հետազոտական բաղադրիչի ներդրումն արդյունավետ է և միտված է գլխավոր նպատակի իրականացմանը՝ ավարտական կուրսում ուսանողներին պատրաստել հետազոտական աշխատանք կատարելուն: Հետազոտական աշխատանքի արդյունքները, ինչպես նաև կատարման ընթացքը վերահսկվել և քննարկվել է ամբիոնում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.-1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունն ընդունել ի գիտություն

Գիտական խորհրդի նախագահ՝ ***Գ. Ավետիսյան***

Քարտուղար՝ ***Ա. Ալեքսանյան***